ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի մոտ 2022 թվականի ապրիլի 8-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի

«Հույսի Մեծամոր» հասարակական կազմակերպության ղեկավար՝ Մարգարիտա Սեդրակյանի
«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավար՝ Նաիրա Առաքելյանի

Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օրակարգում

ՄԺԾԾ նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում 2023-2025 թվականների բյուջետային հայտերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, կապված Հայաստանի Հանրապետության Վարչապետի 20.01.2022թ N 72-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 19-րդ կետի պահանջների կատարման հետ:

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Վ.Մկրտչյան /

Օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը խորհրդակցության մասնակիցներին ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Վարչապետի 20.01.2022թ N72-Ա որոշումը, որի պահանջի համաձայն անհրաժեշտ է քննարկել և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն, որն ընդգրկում է 2023-2025 թվականների ՀՀ Արմավիրի մարզպետարանի միջնաժամկետ ծախսերի հայտերը:
«Հույսի Մեծամոր » և «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունների ղեկավարները անդրադառնալով ներկայացված

տեղեկատվությանը՝ հետաքրքրվեցին սոցիալական օգնությունների տրամադրման ընթացակարգով և գործընթացով:

Վ.Մկրտչանը սոցիալական օգնությունների տրամադրման ընթացակարգի վերաբերյալ տեղեկացրեց, որ այդ գործընթացի իրականացման համար ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրում է քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց հավաստիությունը, ամբողջականությունը, սոցիալական և առողջական վիճակին վերաբերող տեղեկատվությունները, որոնք հիմք են հանդիսանում տրամադրվող օգնությունների համար: Նա նշեց նաև, որ օգնությունները տրամադրվում են ելնելով ըստ քաղաքացիների սոցիալական և առողջական վիճակների առաջնահերթության և անհրաժեշտության:

Հասարակական կազմակերպությունների ղեկավարները ներկայացնելով իրենց կազմակերպությունների կողմից իրականացված բազմաթիվ աշխատանքները, որոնց միջոցով հնարավորինս կարողանում են օգնել տարեց մարդկանց, հաշմանդամ երեխաներին և առհասարակ սոցիալական ծանր իրավիճակում գտնվող ազգաբնակչությանը, փաստեցին նաև, որ ունեն մի շարք խնդիրներ կապված ֆինանսների, համապատասխան կառույցների կողմից տրամադրվող տեղեկատվության և առհասարակ համատեղ աշխատանքներ իրականացնելու բնագավառում, որի արդյունքում իրականացվող աշխատանքների արդյունքները կլինեն առավել լիարժեք և արդյունավետ: Նրանք ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանին առաջարկեցին այցելություն իրականացնել իրենց կողմից ղեկավարվող հասարակական կազմակերպություններ՝ տեղում տեսնելու և ծանոթանալու իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև ներկայացրեցին մի շարք առաջարկություններ համապատասխան պետական կառույցների, այդ թվում նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի հետ համագործակցության համար:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցին, նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանը մշտապես պատրաստակամ է համագործակցությամբ նոր ծրագրեր քննարկելու և ըստ անհրաժեշտության միասնական գործառույթներ իրականացնելու համար: Ավելին, մարզպետարանը հարթակ կարող է հանդիսանալ նաև ազգաբնակչությանը հուզող խնդիրներն օգտակար, արդյունավետ հնարավորինս լիարժեք լուծելու և կարգավորելու գործում:

Օրակարգային հարցի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

4/20/2022

X

VERIFIED OCSP 4/20/2022 18:02:00 GMT+4

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արձ.՝ Մ.Առուշանյան

Հավելված
ՀՀ վարչապետի
N 72-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող հանրային իշխանության մարմինները	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ), ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման շրջանակներում մեթոդական ցուցումների մշակում և ուղարկում՝		մինչև 2022 թ. հունվարի 24-ը
		ա) պետական մարմինների ՄԺԾԾ (ներառյալ՝ բյուջե-տային ֆինանսավորման) հայտերի կազմման և դրանց ներկայացման,	ԲԳԿ հանդիսացող մարմիններ (սույն ժամանակացույցում՝ այսուհետ՝ հայտատու մարմիններ)	

ՀՀ կառավարության 20.01.2022 թ. N 72-Ն որոշման խմբագրված
հավելված 19 մաս 1կետ
-2023թ - 2025թթ

18.	Հայտատու մարմիններ	ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի նախնական տարբերակում ներառված բյուջետային ծրագրերը ՀՀ Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում քննարկելու ժամանակացույցերի մշակում և համապատասխան հանձնաժողովների հետ համաձայնեցում		մինչև 2022 թ. ապրիլի 5-ը
19.	Հայտատու մարմիններ	ՄԺԾԾ նախագծի (ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի) մշակման աշխատանքների շրջանակներում բյուջետային հայտերի շուրջ քննարկումների անցկացում, իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) հետ և քննարկումների արդյունքների վերաբերյալ (ներառյալ՝ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ամփոփաթերթ) տեղեկատվության ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2022 թ. ապրիլի 8-ը
20.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացման նպատակով հայտատու մարմինների հետ իրենց ՄԺԾԾ (ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի) հայտերի, ինչպես նաև ՄԺԾԾ նախագծի (ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի) հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների, հարկաբյուջետային շրջանակների, ոլորտային ԲԳԿ-ների մասով ծախսային չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	ՀՀ վարչապետի աշխատակազմ	մինչև 2022 թ. մայիսի 10-ը
21.	Հայտատու մարմիններ, ՀՀ ֆինանսների նախարարություն	Հայտատու մարմինների կողմից ներկայացված ՄԺԾԾ (ներառյալ՝ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի) հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)		մինչև 2022 թ. մայիսի 13-ը